Ծուշանիկ Կուրղինյան

Աշնան երգերից

Էլ ծաղիկ չկա՛ . . . խամրած մացառներ
Ծաղկոտ օրերը թողին հիշատակ .
Ո՞վ գիտե թե ուր, ինչ սիրուն վայրեր
Թռան գնացին գարուն ու սոխակ:

Ծառ ու թուփն այնպես խղճալի դեմքով
Նայում են երկինք անզոր արևին,
Ու տխուր խշշում, սառ քամու թևով
Դեղնած տերևներ թափթփում գետնին:

Լալկան ուռենին իր վիշտը թողած
Կարեկից սրտով զգվում է ափին,
Մերկ ու այլանդակ ճյուղերը կախած
Նայում մտածկոտ գետակի դեմքին:

Էլ ծաղիկ չկա քարքանդ պարտեզում
Անտեր ընկած է մի գորշ նստարան .
Նրա թիկունքին ձեռքերով դողուն
Գրած թողած է մի սիրո նշան:

1906 թ .